



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«05» 03 2018թ.

No 06/3-4/10738-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՏԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 07.02.2018թ.

թիվ E4FD-B608-58E4 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝
Օրենսգրք) 307-րդ հոդվածի 3-րդ մասով, հայտնում ենք հետևյալը:

Օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության
տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝
շալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված)՝ նույն հոդվածի 1-
ին մասով սահմանված ապրանքների վրա Հայաստանի Հանրապետության տարածքում
օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե այդ
ապրանքներն օտարվում կամ սպառվում են նույն տարայավորմամբ (փաթեթավորմամբ) ու
ապրանքային տեսքով՝ առանց քաշը (ծավալը) փոփոխելու:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումը՝ հայտնում ենք, որ գրությամբ նկարագրված դեպքում տարայավորված (փաթեթավորված) ապրանքի միավոր հանդիսանում է պարկը և անկախ այն հանգամանքից, որ ներմուծողի կողմից ներմուծված ապրանքները կարող են օտարվել նաև փաթեթներով, որի մեջ փաթեթավորված են 50 պարկ, դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա է պարկը:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ